



ՎԵՐԳԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու

ՀՀ ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ*

Ներդրումային միջավայրը տնտեսական, քաղաքական և ֆինանսական պայմաններն են, որոնք պայմանավորում են օտարերկրյա ներդրումների հոսքը տվյալ երկիր: Ներդրումային բարենպաստ միջավայրը բնութագրվում է քաղաքական կայունությամբ, հստակ օրենսդրությամբ, ցածր տոկոսադրույքներով և արտոնություններով: Ներդրումային միջավայրի գնահատականը ցանկացած ներդրումային որոշման կայացման կարևորագույն գործոն է:

Ներդրողների ներդրումային որոշումների կայացման առումով կարևորվում է Համաշխարհային բանկի կողմից ներկայացվող «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցը (Doing Business):

Հիմնաբառեր. համաշխարհային բանկ, ներդրումային միջավայր, գործարարությամբ զբաղվել, գործարարություն, նորարարություն, փոքր և միջին բիզնես, բիզնես ռազմավարություն, հաջողակ բիզնես

JEL: F20, F21, F23

Ներդրումային միջավայրը տնտեսական, կազմակերպական, քաղաքական, իրավական, սոցիալ-մշակութային այնպիսի գործոնների ամբողջություն է, որը կանխորոշում է ներդրումների ռիսկի աստիճանը, դրանց արդյունավետ օգտագործման հնարավորությունները և, այդպիսով՝ ներդրումների իրականացման գրավչությունն ու նպատակահարմարությունն այս կամ այն տնտեսավարման համակարգում:

* "The European Commission support for the production of this publication does not constitute an endorsement of the contents which reflects the views only of the authors, and the Commission cannot be held responsible for any use which may be made of the information contained therein."

Ըստ Ս. Ցակունովի¹ ներդրումային միջավայրը սոցիալական, տնտեսական, կազմակերպական, իրավական, քաղաքական, մշակութային նախադրյալների հանրագումար է, որը կանխորոշում է տնտեսական այս կամ այն համակարգում (երկրի, տարածաշրջանի տնտեսության, կազմակերպության) ներդրումների կատարման գրավչությունը և նպատակահարմարությունը:

Ներդրումային միջավայրը տնտեսական, քաղաքական և ֆինանսական պայմաններն են, որոնք պայմանավորում են օտարերկրյա ներդրումների հոսքը տվյալ երկիր: Ներդրումային բարենպաստ միջավայրը բնութագրվում է քաղաքական կայունությամբ, հստակ օրենսդրությամբ, ցածր տոկոսադրույքներով և արտոնություններով:

Ներդրումային միջավայրի գնահատումը ցանկացած ներդրումային որոշման կայացման կարևոր գործոն է: Ներդրողը ներդրումային միջավայրը գնահատելիս հենվում սեփական փորձի և փորձագիտական գնահատականների վրա:

Ներդրողների ներդրումային որոշումների կայացման առումով կարևորվում է Համաշխարհային բանկի կողմից ներկայացվող «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցը (Doing Business): Ցուցանիշները, որոնք գնահատվում և վերլուծվում են նշված զեկույցում, թույլ են տալիս գնահատել ձեռնարկությունների գործունեության կարգավորումը և սեփականության իրավունքի պաշտպանությունը, ինչպես նաև դրանց ազդեցությունը փոքր և միջին ձեռնարկությունների վրա:

Գործարարությամբ զբաղվելու ցուցանիշների բարձր վարկանիշը ենթադրում է համապատասխան բարենպաստ միջավայր: Ըստ Doing Business-2018 զեկույցի՝ գործարարությամբ զբաղվելու դյուրինության տեսանկյունից աշխարհի առաջատար երկիրը 2018 թ. համարվել է Նոր Զելանդիան, այնուհետև՝ Սինգապուրը, երրորդ հորիզոնականը զբաղեցնում է Ռանիան, չորրորդը՝ Կորեան, հինգերորդը՝ Հոնկոնգը և Չինաստանը: Հայաստանի Հանրապետությունը 2015 թ. զբաղեցրել է 43-րդ տեղը, 2016 թ. 38-րդն էր, իսկ 2017 թ.՝ 47-րդը²:

Աղյուսակ 1

Տարածաշրջանի երկրների գործարարության դյուրինության վարկանիշի դինամիկան 2014–2017 թթ.³

Երկիր	2014–2015 թթ.		2015–2016 թթ.		2016–2017 թթ.	
	Վարկանիշ	Ցուցանիշ	Վարկանիշ	Ցուցանիշ	Վարկանիշ	Ցուցանիշ
Վրաստան	24	77,45	16 ↑	80,20	9 ↑	82,04
Հայաստան	43	72,16	38 ↑	73,63	47 ↓	72,51
Ռուսաստան	51	70,99	40 ↑	73,19	35 ↑	75,50
Ադրբեջան	63	67,80	65 ↓	67,99	57 ↑	70,19
Թուրքիա	55	69,16	69 ↓	67,19	60 ↑	69,14

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, 2016–2017 թթ. միայն Հայաստանի վարկանիշն է անկում ապրել, չնայած տարածաշրջանի երկրների

¹ St'u Доклад о мировых инвестициях 2001: содействие развитию и связей, Обзор, ЮНКТАД, Нью-Йорк и Женева, 2001, էջ 69:

² St'u Doing Business-2018. <http://russian.doingbusiness.org/~media/WBG/DoingBusiness/Documents/Annual-Reports/English/DB2018-Full-Report.pdf>

³ St'u <http://www.doingbusiness.org/~media/WBG/DoingBusiness/Documents/Annual-Reports/English/DB2018-Full-Report.pdf>

հնգյակի շարքում գործարարության դյուրինության ցուցանիշներով զբաղեցնում է 3-րդ տեղը:

Վարկանիշային դիրքը որոշվում է ըստ սահմանային արժեքից հեռավորության ցուցանիշների միջին արժեքի, որը հաշվարկվում է յուրաքանչյուր տնտեսության համար 10 թեմատիկ ուղղություններով: Տվյալ ցուցանիշը թույլ է տալիս գնահատել, թե որքանով է յուրաքանչյուր տնտեսություն մոտեցել գործարարության միջազգային լավագույն փորձի ցուցանիշներին: Որքան բարձր է միավորը, այնքան ավելի արդյունավետ է համարվում գործարարության միջավայրը:

Աղյուսակ 2

Տարածաշրջանի երկրների գործարարության միջավայրի վարկանիշները և իրականացված բարեփոխումների քանակը⁴

Երկիր	Տեղը (0-190)	Հեռավորությունը սահմանային արժեքից (0-100)		Ոլորտում բարեփոխումների քանակը	
	2017	2016	2017	2016	2017
Հայաստան	47	71.92	72.51	3	2
Ադրբեջան	57	67.07	70.19	3	4
Վրաստան	9	79.92	82.04	2	3
Ռուսաստան	35	74.69	75.50	5	3
Թուրքիա	60	67.98	69.14	1	2

Գործարարությամբ զբաղվելու դյուրինության ընդհանուր ցուցանիշի հաշվարկման 10 ենթացուցանիշներից 5-ի մասով Հայաստանը առաջընթաց է արձանագրել, 3 ենթացուցանիշներով՝ հետընթաց, իսկ 2 ցուցանիշ մնացել են անփոփոխ:


Ջեկույցի համաձայն՝ ՀՀ-ն 4-րդ տեղն է զբաղեցնում ձեռնարկությունների գրանցման դյուրինությամբ. նախորդ տարվա համեմատությամբ այս ցուցանիշը բարելավվել է 1 կետով: Առաջընթաց է գրանցվել նաև հարկերի զանձման ընթացակարգերի պարզեցման առումով. նախորդ տարվա համեմատությամբ ՀՀ դիրքը բարելավվել է միանգամից 32 կետով: Բարելավվել են նաև արտաքին առևտրի հետ կապված ընթացակարգերը. այս ցուցանիշով Հայաստանը, նախորդ տարվա համեմատությամբ, առաջ է անցել 14 կետով:

Հայաստանի համար հետընթացը պայմանավորված է եղել հիմնականում վարկերի ստացման դյուրինության նվազմամբ. ՀՀ-ն դիրքերը զիջել է 6 կետով:

ՀՀ-ն շարունակում է հետնապահ մնալ *հարկերի վճարում* ենթացուցչի մասով՝ 183 երկրների շարքում զբաղեցնելով 153-րդ տեղը: 2008 թ. ցուցանիշով ՀՀ-ն ուներ բավական բարձր վարկանիշ ինչպես տարածաշրջանի, այնպես էլ հարևան երկրների համեմատությամբ. զբաղեցնում էր 37-րդ տեղը: Սակայն հետագա տարիների ցուցանիշները դիտարկելիս պարզ է դառնում, որ մեր երկիրն այս առումով շարունակական անկման միտում է դրսևորել, որն արտահայտվում է վարկանիշի գրեթե բոլոր ցուցիչների մասով: Եվ քանի որ «Doing Business» զեկույցը ուղենիշ է համարվում երկրների ներդրումային գրավչությունը գնահատելու և ներդրողների կողմից գործարարությամբ

⁴ St'u Doing Business-2018. <http://russian.doingbusiness.org/~media/WBG/DoingBusiness/Documents/Annual-Reports/English/DB2018-Full-Report.pdf>

զբաղվելու վերաբերյալ որոշում կայացնելու համար, ուստի ՀՀ վարկանիշի բարձրացման և ներդրումների ներգրավման իմաստով կարևոր է նշված ոլորտներում շարունակական բարեփոխումների իրականացումը: Որոշումը կատարվում է 2 չափանիշով՝ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն և արտահանման ընդհանուր ծավալում հանքահումքային ապրանքների կշիռը (եթե գերազանցում է 70%-ը, ապա երկիրը համարվում է գործոնային փուլում գտնվող): ՀՀ-ն գտնվում է ռեսուրսների վրա հիմնված փուլից արդյունավետության վրա հիմնված փուլին անցման միջանկյալ շրջանում՝ Ադրբեջանի, Վրաստանի և Ղազախստանի հետ միասին:



Աղբյուր՝ ՀՀ ՀՏՑ, Համաշխարհային տնտեսական ֆորում (Համաշխարհային մրցունակության զեկույց):

Նշում. ՀՄՑ վարկանիշները դիտարկված տարբեր երկրների թվի շարքում են. 117-148 երկիր՝ 2005-2016 թթ.: 2005 թվականին (2005/2006)՝ 117 երկիր, 2009 թվականին (2009/2010)՝ 97 երկիր, 2016 թվականին (2016/2017)՝ 138 երկիր:

Գծապատկեր 1. Հայաստանի ՀՆԱ աճի դինամիկան և դիրքն ըստ Համաշխարհային մրցունակության ցուցչի (2005-2016 թթ.)

ՀՀ-ն ՀՄՁ 2017-2018-ի համաձայն՝ զբաղեցնում է 73-րդ տեղը 137 երկրների շարքում՝ նախորդ տարվա (79) դիրքը բարելավելով 5 կետով:

2017-2018 թթ. զեկույցի արդյունքներով առաջատար երեք երկրները շարունակում են մնալ Շվեյցարիան, ԱՄՆ-ն և Սինգապուրը: Մրցունակությամբ առաջին հնգյակում են նաև Նիդեռլանդները և Գերմանիան: ԱՊՀ տարածաշրջանի (ներառյալ՝ Վրաստանը) երկրների խմբում զգալի առաջընթաց են արձանագրել Ղազախստանը (57-րդ տեղից՝ 53-րդը) և ՌԴ-ն (43-րդ տեղից՝ 38-րդը), Տաջիկստանը (77-րդ տեղից՝ 79-րդը): Վրաստանն իր դիրքերը բարելավել է 8 կետով (67-րդ տեղից՝ 59-րդը), Ադրբեջանը՝ 37-րդից 35-րդ տեղ, Թուրքիան՝ 55-րդից 53-րդ տեղ, Իրանը՝ 76-րդից 69-րդ տեղ:

ՀՀ-ն դասվում է այն 26 երկրների շարքին, որոնք իրականացրել են երեք կամ ավելի բարեփոխում. այդպես է վարվել աշխարհի տնտեսությունների միայն 14 տոկոսը: Մասնավորապես ասվում է, որ ՀՀ-ում ավելի հեշտ են տրվում շինարարության թույլտվությունները, ինչը ենթադրում է, որ ցածր ռիսկային նախագծերն այլևս չպետք է հաստատվեն անկախ փորձագետների կողմից: Բացի այդ, համաձայն դատական համակարգի նոր օրենքի, վիճարկվող գործերը դատավորներին հասնում են պատահականության սկզբունքով ու ամբողջովին մեքենայացված համակարգի միջոցով, ինչը նշանակում է, որ կրճատվում է կոռուպցիոն ռիսկը՝ նախապես ընտրված դատավորի կողմից գործը վարելու հետ կապված: Երրորդ գործոնը, որը

զեկույցում ՀՀ-ի համար ապահովել է դրական տեղաշարժ, Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության հետևանքով ՌԴ-ի հետ առևտրի փաստաթղթաշրջանառության ու սահմանային ընթացակարգերի համար նախատեսված ժամանակի ու ծախսերի կրճատումն է:

ՀՀ-ն բարձր դիրք ունի աշխատաշուկայի արդյունավետության ցուցանիշով՝ 34-րդ տեղ, ինչը պայմանավորված է գործատու-աշխատակից հարաբերությունների ազատականացմամբ և ճկունությամբ:

ՀՀ վատագույն դիրքը դրսևորվել է ըստ երկու ցուցիչների՝ շուկայի չափեր (115) և մակրոտնտեսական միջավայր (114): ՀՀ ամենամեծ, կարելի է ասել՝ միակ 15 կետով վարկանիշային անկումը 2013–2014 թթ. արձանագրվել է մակրոտնտեսական միջավայր (կայունություն) ցուցանիշում, ընդ որում, այս ցուցիչ մասով անկում է արձանագրվել դեռևս 2011 թվականից, ինչը կարելի է պայմանավորել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով:

Քննարկված վարկանիշները և զեկույցները լուրջ տեղեկատվություն են պարունակում ներդրումային միջավայրի գրավչությունը պայմանավորող գործոնների վերաբերյալ և նախանշում են այն ոլորտները, որոնց բարելավման ուղղությամբ երկրները պետք է որոշակի քայլեր կատարեն: Նշվածը հատկապես մեծ կարևորություն է ծեռք բերում օտարերկրյա ներդրումների ներգրավման տեսանկյունից: Վարկանիշները ուղենիշ են համարվում օտարերկրյա ներդրողների կողմից ներդրումային որոշումների կայացման ժամանակ:

Դյուրինության վարկանիշն արտահայտող ցուցանիշները ներկայացված են աղյուսակում.

Աղյուսակ 3

Գործարարությամբ զբաղվելու դյուրինության ցուցանիշները⁵

	Դյուրինության ցուցանիշներ	2016 թ.	2017 թ.	Աճ/անկում
1.	Գործարարությամբ զբաղվելու ընդհանուր դյուրինություն	37	45	-8
2.	Կազմակերպության ստեղծում	56	55	+1
3.	Շինարարություն իրականացնելու թույլտվություն	57	50	+7
4.	Էլեկտրամատակարարման համակարգի միացում	132	130	+2
5.	Սեփականության գրանցում	6	8	-2
6.	Վարկերի ստացում	40	45	-5
7.	Ներդրողների պաշտպանություն	67	62	+5
8.	Հարկահավաք	97	65	+32
9.	Միջազգային առևտուր	104	90	+14
10.	Պայմանագրերի կատարման ապահովում	95	65	+30
11.	Սնանկության գործընթաց	60	54	+6
12.	Անվճարունակության հաստատում	48	46	+2

Նշված վարկանիշը հիմնվում է 12 հիմնայունների վրա. ենթակառուցվածքներ, ապրանքների ու աշխատանքի շուկայի արդյունավետություն, կրթության ու առողջապահության որակ, մակրոտնտեսական իրավիճակ, որոնցից յուրաքանչյուրը ներառում է բազում այլ ցուցանիշներ:

Մասնավորապես՝ «նորարարություն» հիմնայան գնահատականով մեր երկիրը 101-րդ տեղում է, նորարարական կարողությունների առումով՝ 87-րդ

⁵ Տես նույն տեղը:

տեղում, գիտահետազոտական ինստիտուտների որակով՝ 105-րդ տեղում, մասնավոր ընկերությունների կողմից գիտական հետազոտությունների ուղղությամբ կատարված ծախսերի գծով՝ 109-րդ տեղում, 109-րդ տեղում է նաև պետության կողմից բարձր տեխնոլոգիական արտադրանքի գնումների չափանիշով: Հետազոտությունների և զարգացման (R&D) ոլորտում ինստիտուտների և ընկերությունների համագործակցությունը նույնպես թույլ է՝ 140 երկրների շարքում 111-րդը, ինչը նշանակում է, որ ՀՀ-ում բիզնեսը կտրված է գիտությունից, և գիտական արտադրանքը ձեռք չի բերում կիրառական նշանակություն: Դատական համակարգի անկախությամբ 106-րդ տեղում է, փոքր բաժնետերերի իրավունքների պաշտպանությամբ 108-րդն է: Օտարերկրյա ներդրողների տեսանկյունից՝ վերը թվարկվածները կարևոր գործոններ են:

Աշխատանքի շուկայի արդյունավետություն հիմնադրված է, օրինակ՝ սեփական տաղանդներին պահպանելու կարողության չափանիշով ՀՀ-ն 119-րդ տեղում է, *տաղանդներ ներգրավելու կարողությամբ*՝ 111-րդն է, ինչը նշանակում է, որ մենք խնդիր ունենք սեփական ուղեղներին սեփական երկրում պահելու և նրանց ներուժն օգտագործելու առումով: Դժվարություններ կան դրսից «ուղեղներ» ներգրավելու հարցում ևս:

ՀՀ-ի համար խոչընդոտ է համարվել ֆինանսական միջոցների անմատչելիությունը: Դա, առաջին հերթին, վերաբերում է բիզնես վարկերի տոկոսադրույքներին և պայմաններին, թղթատարությանը և փոխարժեքին: Խոչընդոտների թվում գործարարները նշել են նաև կոռուպցիան, ենթակառուցվածքների ոչ բավարար մակարդակը, հարկային դրույքաչափերը և այլն:

Վերջին տարիներին Հայաստանի տնտեսության մեջ տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունները, երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունը նոր պահանջներ են առաջադրում մասնավոր հատվածի, մասնավորապես՝ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման առումով: Ուստի անհրաժեշտություն է առաջացել վերանայելու և հստակեցնելու ՓՄՁ սուբյեկտների դասակարգման գործող չափորոշիչները:

Հարկ է նշել, որ ԵՄ չափորոշիչները կիրառող գրեթե բոլոր երկրները կարող են կատարել համեմատական վիճակագրական վերլուծություն, ինչը կօգնի տարբեր երկրներում ՓՄՁ ոլորտի զարգացման մակարդակի վերաբերյալ առավել հստակ պատկեր ունենալուն՝ նպաստելով երկրի տնտեսության մեջ այդ բնագավառի տեղի ու դերի ճիշտ գնահատմանը, որը թույլ կտա գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների դեպքում կիրառել համեմատաբար մեղմ հարկման ռեժիմ և իրականացնել հասցեական պետական աջակցություն⁶:

Բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ռազմավարության մշակման ժամանակ օգտագործվում են ԵՄ «Փոքր բիզնեսի ակտի» (Small Business ACT) ուղղությունները, որոնք կազմվել են 2008-ին՝ որպես փոքր և միջին ձեռնարկատիրության խթանման գլխավոր գործիք: ՓԲԱ-ն ներառում է 10 սկզբունք, որոնք առաջարկվում է հաշվի առնել ինչպես ԵՄ-ում, այնպես էլ ազգային մակարդակներում փոքր և միջին ձեռնարկատիրությանը վերաբերող քաղաքականություն մշակելիս և իրագործելիս:

⁶ Տե՛ս Կ.Աթոյան, Մ.Մարդույան, Պ. Քալանթարյան, Բիզնեսի ներածություն, Եր., 2017:

ՓԲԱ հիմնական առաջնահերթություններն են ձեռներեցության խթանումը, օրենսդրական խոչընդոտների նվազեցումը, ֆինանսավորման և շուկաների հասանելիության մակարդակների բարձրացումը և բիզնեսի միջազգայնացումը:

ՓԲԱ գնահատմանը Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է 2012-ից: Ներկայումս մեծ նշանակություն է տրվում «Սկզբում մտածեք փոքրի մասին» սկզբունքին: Դա համարվում է ՓԲԱ հիմնական սկզբունքը, որը պահանջում է ՓՄՁ սուբյեկտների գործունեության իրավական և վարչարարական միջավայրի պարզեցում, ներառում է ոլորտի վրա ազդեցություն ունեցող քաղաքականությունների ընթացակարգերի ստուգում: Նման քաղաքականություններ մշակողների համար դա ուղղորդող հիմք է դառնում ՓՄՁ սուբյեկտների գործունեությունը խթանելու համար:

ԵՄ «Փոքր բիզնեսի ակտի» 10 ուղղություններն են.⁷

1. ձեռնարկատիրության ուսումնառություն և կանանց ձեռներեցություն,
2. սնանկացում և երկրորդ հնարավորություն ՓՄՁ սուբյեկտների համար. ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ ազնիվ տնտեսավարողները, ովքեր սնանկացել են, գործելու երկրորդ հնարավորություն կստանան,
3. ՓՄՁ քաղաքականության կարգավորման շրջանակ. կանոնակարգերի մշակում՝ «Սկզբում մտածեք փոքրի մասին» սկզբունքին համապատասխան,
4. ՓՄՁ գործառնական միջավայր. իրականացնել ՓՄՁ սուբյեկտների կարիքներին արձագանքող պետական կառավարում,
5. ՓՄՁ և սկսնակ ընկերությունների համար աջակցության մեխանիզմների ստեղծում,
6. ֆինանսավորման հասանելիություն. հեշտացնել ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման գործընթացը,
7. չափորոշիչներ և տեխնիկական կարգավորումներ. օգնել ՓՄՁ սուբյեկտներին՝ առավելագույնս օգտվելու ԵՄ միասնական շուկայի տրամադրած հնարավորություններից,
8. ձեռներեցության հմտություններ. նպաստել ՓՄՁ սուբյեկտների ձեռնարկատիրական հմտությունների և նորարարությունների կիրառմանը,
9. ՓՄՁ սուբյեկտները «կանաչ տնտեսության» մեջ. խրախուսել ՓՄՁ սուբյեկտների՝ բնապահպանական սպառնալիքները հնարավորությունների վերածելու նախաձեռնությունները,
10. ՓՄՁ միջազգայնացում. աջակցել ՓՄՁ սուբյեկտներին՝ օգուտներ քաղելու շուկաների աճից:

Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառն օժտված է որոշակի հնարավորություններով, որոնք ներկայացնում են ՓՄՁ զարգացման և աճի նպատակով օգտագործվող լավագույն գործոնները: Դրանք են՝ մարդկային կապիտալը, արտահանման աճի խթանումը՝ ԵԱՏՄ անդամակցությամբ և ԵՄ-ի հետ առևտրի ընդլայնմամբ, որոշակի կառուցվածքային փոփոխությունները տնտեսությունում (վերամշակող արդյունաբերության և ծառայությունների չափաբաժնի ավելացում ՀՆԱ-ում, զբաղվածության տեղաշարժեր, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում), մեծ ներուժ

⁷ Տե՛ս <http://mineconomy.am/>

ունեցող հայկական սփյուռքի առկայությունը, ոչ բանկային աղբյուրներից ֆինանսավորումը, օտարերկրյա ուղղակի ներդրումների համեմատաբար բարձր մակարդակը, որոնք կարող են ուղղվել ՓՄՁ զարգացման ծրագրերի իրագործմանը, ԵՄ ծրագրերին մասնակցությունը (Ձեռնարկությունների եվրոպական ցանց և COSME):

Հայաստանի աշխարհագրական դիրքը, բնական ռեսուրսները, որակյալ գիտական մեծ ներուժով աշխատանքային ռեսուրսների առկայությունն ակնհայտորեն կարող են հետաքրքրել հնարավոր ներդրողներին: Հանրապետության ներդրումային գրավչությունը կնպաստի այդ ներուժի արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:

Օգտագործված գրականություն

1. Վերլուծություն ՓՄՁ հարկային դաշտի վերաբերյալ. 2013-2015 համեմատական, ՎՋԵԲ գործարարության աջակցման գրասենյակ, Եր., 2016:
2. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թթ. ռազմավարություն, հավելված 3:
3. Վթյան Կ.Լ., Մարդույան Մ.Ս., Քալանթարյան Պ.Ա, Բիզնեսի ներածություն, Եր., 2017:
4. Анискин Ю.П., Основы бизнеса: учебник для бакалавров. М.: РИПОЛ классик, Омега-Л, 2016.
5. Боброва О.С., Основы бизнеса: учебник и практикум для академического бакалавриата. М., Юрайт, 2016.
6. Чиненов М.В., Основы международного бизнеса: учебник. М., КНОРУС, 2012.
7. Ягудин С.Ю., Венчурное предпринимательство. Франчайзинг, СПб., Питер, 2011.
8. Доклад о мировых инвестициях, 2001: содействие развитию и связей, Обзор, ЮНКТАД, Нью-Йорк и Женева, 2001.
9. Doing Business – 2018.
<http://russian.doingbusiness.org/~media/WBG/DoingBusiness/Documents/Annual-Reports/English/DB2018-Full-Report.pdf>
10. Doing Business – 2017.
<http://russian.doingbusiness.org/~media/WBG/DoingBusiness/Documents/Annual-Reports/English/DB2017-Full-Report.pdf>
11. <http://mineconomy.am/>

ВЕРГИНЕ КИРАКОСЯН

Доцент кафедры МЭО АГЭУ,
кандидат экономических наук

Анализ инвестиционной среды РА.– Инвестиционная среда - это экономические, политические и финансовые условия, обуславливающие приток иностранных инвестиций в данную страну. Благоприятный инвестиционный климат характеризуется политической стабильностью, четким законодательством, низкими процентными ставками и привилегиями. Оценка инвестиционного климата является ключевым фактором при принятии любого инвестиционного решения.

С точки зрения инвестирования в принятии инвестиционных решений подчеркивается бизнес-программа бизнес-дебитации Всемирного банка.

Ключевые слова: *Всемирный банк, инвестиционная среда, “заниматься бизнесом”, предпринимательство, новизна, малый и средний бизнес, бизнес-стратегия, успешный бизнес.*
JEL: F20, F21, F23

VERGINE KIRAKOSYAN

Associate Professor of the Chair of IER at ASUE,
PhD in Economics

Analysis of Investment Environment in the RA.– Investment environment is the combination of economic, political and financial conditions that stipulate the flow of foreign investments to the given country. Favorable investment climate is characterized by political stability, clear legislation, low interest rates and privileges.

The investment climate assessment is a key factor in making any investment decision.

In terms of investing and marking investment decisions World Bank's Business Deduction Business Program is highlighted.

Key words: *World Bank, Investment Environment, Business, Innovation, Small and Medium Business, Business Strategy, Successful Business.*
JEL: F20, F21, F23